ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

21 հուլիսի 2017 թվականի N 112-Ա

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 34-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Թեղենիքի Վ. Ջինիշյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի 2017 թվականի հուլիսի 12-ի N 6 արձանագրությունը *(որոշումը)* **կարգադրում եմ.**

1. *Լաուրիկ Սարիբեկի Գրիգորյանին* 2017 թվականի հուլիսի 21-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Թեղենիքի Վ. Ջինիշյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն՝ *նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով*:

2. ՈՒԺը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2017 թվականի մայիսի 16-ի *«Լ. Գրիգորյանին տնօրենի պաշտոնից ազատելու մասին»* N 67-Ա կարգադրության 2-րդ կետը:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Վ. ԳՈՒԼՈՅԱՆ

2017 թվականի հուլիսի 21
ք. Հրազդան